ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ *Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ձևավորումը տարրական դպրոցում*

Անցկացման վայր՝ *Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց*

Աշխատանքի ղեկավար ՝ *Հասմիկ Բեյբության*

Ուսուցիչ՝ *Բյուրեղիկ Գևորգյան*

Դպրոց՝ *Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց*

2022 թ Մարտունի

Բովանդակություն

1..Ներածություն ---------- 2-3
2.Հետազոտության համատեքստ ---------- 4-9
3. Հետազոտության ընթացք---------- 10-13
4. Տվյալների մշակում և վերլուծություն---------- 14-17
5.Եզրակացություն---------- 18
6.Օգտագործված գրականության ցանկ---------- 19-20
7. Դասի պլան 1 ---------- 21-23
8. Դասի պլան 2 ---------- 24-27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների միջանձնային հարաբերությունների հիմնախնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների,մանկավարժների ուշադրության կենտրոնում,քանի որ կրտսեր դպրոցական տարիքում է հիմք դրվում իր և ուրիշների հանդեպ վերաբերմունքի ձևավորումը:Ծփումը հանդես է գալիս որպես հատուկ հաղորդակցական գործունեություն՝ուղղված փոխհարաբերությունների ձևավորմանը:Կրտսեր դպրոցական տարիքում հասակակիցների հետ միջանձնային հարաբերությունները ձեռք են բերում նոր նշանակություն:

Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի գիտնականներ,ինչպիսիք են Ժան Պիաժեն,Քոլբերգը,Յուկերմանը,Վ.Դավիդովան,Լ.Բոժովիչը և այլք:

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով,որ յուրաքանչյուր էակ սոցիալականացվում է հաղորդակցման միջոցով:Տարիքային այս փուլում միջանձնային հարաբերությունները հանդիսանում են երեխայի սոցալականացման կարևոր միջոց:Կրտսեր դպրոցական տարիքում երեխան հանդիպում է երկու կարևոր փուլի,որոնք իրենց հետ բերում են նոր սոցիալական միջավայր և պայմաններ:Նա պետք է կարողանա հարմարվել դրանց,հաղթահարել անցումային դժվարություններ ու ճգնաժամերը,որի արդյունքում սոցիալական գործընթացը կիրականանա արդյունավետ,ինչն էլ կօգնի նրան հեշտ անցում կատարել մի այլ սոցիալական միջավայր:Մյուս կողմից պայմանավորվա է այն հանգամանքով,որ երեխան գալով նոր կոլեկտիվ ուստի պետք է պահպանվի նրա ֆիզիոլոգիական և հոգեբանական անվտանգությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված էայն մեխանիզմների բացահայտումով,որոնք դրված են կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերություններում՝տարրական դասարաններում:

Հետազոտության նպատակը

Միջանձնային հարաբերություններում կրտսեր դպրոցականների հաղորդակցման դժվարությունների բացահայտումն ու մանկավարժական ուղիների առաջադրումն է:

Հետազոտության խնդիրներն են

1.Ուսումնասիրել միջանձնային հարաբերություններում կրտսեր դպրոցականների հաղորդակցման առանձնահատկությունները:

2.Բացահայտել միջանձնային հարաբերություններում նրանց հաղորդակցման դժվարությունների հիմնական պատճառները:

3. Առաջարկել կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերություններում դժվարությունների հաղթահարման մանկավարժական ուղիներ:

Յուրաքանչյուր ուսուցիչ, մանկավարժ իր գործունեության ընթացում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Հետազոտության համատեքստ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի

շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում *կամածինության* ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/(1,էջ.25):

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև *շարժվելու պահանջմունքը*, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր *է նոր տպավորություններ ստանալու պահանջը*, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում *սոցիալական դրդապատճառների* ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների

ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները:(6,էջ.38):

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի *զգացմունքների* բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքերը այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասկակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փախարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

Կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կամածինության զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է *կամքը,* որը անընդհատ գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվելով սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը, որին դրդում են մեծահասակները:

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է *հիշողությունը*: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման

դեպքում դա հետզհետե դժվարանում է: Ուսուցիչը օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում /իմաստային տարրերի բաժանում, իմաստային խմբավորում, համեմատություն և այլ/ և վերարտադրման հնարներ: Երեխան սկզբնական փուլում դժվարանում է մտապահվող նյութի մեջ իմաստային տարրեր առանձնացնել, ինչը անհրաժեշտ է հմտացնել սկսած տարբեր նկարների և փոքր տեքստերի մտապահման գործընթացից:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած *կամածին ուշադրության* դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխայի գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, գտնել և մտապահել առարկաների կորևոր բնութագրերը և այլն: Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասկաների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում *մտածողության* զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը ստիմուլացնում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի *խոսքը*: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլն: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

Կրտսեր դպրոցականի տարիքի երեխաների միջանձնային հարաբերությունների դաստիարակության հիմնախնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների,մանկավարժների ուշադրության կենտրոնում,քանի որ կրտսեր դպրոցականի տարիքում է հիմք դրվում իր և ուրիշների հանդեպ

վերաբերմունքի ձևավորումը:Ա.Վ.Կրիվչուկ(14,էջ86),Յա.Ա. Կոմենսկի(2,էջ126),նրանք նշում են,որ շփումը հանդես է գալիս որպես հատուկ հաղորդակցական գործունեություն,ուղղված փոխհարաբերությունների ձևավորմանը:Հայտնի է որ յուրաքանչյուր տարիք իր ներդրումն ունի անձի զարգացման գործում:Մանկության տարիներին անձնային որակների զարգացման առումով գոյություն ունեն սենզիտիվ փուլեր:6-7 տարեկանում,որպես սենզիտիվ փուլ հանդես է գալիս շփումը,հաղորդակցումը մեծահասակների և հասակակիցների հետ:Հաղորդակցման գործընթացում երեխան հարաբերությունների կայուն պատկերացումներ է ձեռք բերում իր մասին նրա գիտակցության մեջ դրանք դրսևորվում են որպես անմիջական արտացոլում այն բանի,թե ինչպես են մտածում իր մասին շրջապատի մարդիկ:Շրջապատող մարդկանց հետ փոխհարաբերությունների շնորհիվ տեղի է ունենում երեխայի անձի զարգացումը:Հաշվի առնելով երեխայի տարիքը՝մշակվում են հաղորդակցման ձևեր,որոնց միջոցով էլ յուրացվում են մարդկային հարաբերությունների նորմերն ու կանոնները:Ձևավորվում են պահանջմունքները,հետաքրքրությունները և այնպիսի դրդապատճառներ,որոնք խթանիչ հիմք հանդիսանալով՝հանգեցնում են հաղորդակցական ոլորտի հետագա ընդլայմանը:Արդեն նախադպրոցական տարիքի վերջին ի հայտ են գալիս որոշակի քիչ թե շատ կայուն պատկերացումներ իր ես-իմասին:Ընդ որում դրանք կրում են ոչ միայն ճանաչողական,այլև գնահատող բնույթ:Ինքնագնահատականը ձևավորվում է այլ երեխաների հետ հաղորդակցման արդյունքում:Ներդաշնակ և համարժեք գնահատականը կարող է հիմք հանդիսանալ հասակակիցների հետ փոխհարաբերությունների ձևավորմանը:Եթե երեխան վստահ է իր ուժերի վրա,ապա նրան հեշտ է հաղորդակցվել ընկերների հետ:Հաղորդակցման գործընթացը հիմնականում իրականացվում էերեխայի գործունեության տարբեր ձևերում,հատկապես առաջատար գործունեության՝խաղի ընթացքում:Խաղային կամ արդյունավետ գործունեության ընթացքում երեխան դրսևորում է այնպիսի կամային հատկանիշներ,ինչպիսիք են՝ համագործակցությունը,փոխզիջումը:Հեքիաթների,պատմվածքների բեմական խաղի միջոցով երեխան սովորում է գնահատել հերոսների արարքը վերլուծել,փորձում է նմանվել գրական հերոսներին:Հարաբերությունները ոչ միայն ձևավորվում են,այլև հանդես են գալիս երեխաների փոխհարաբերությունների ընթացքում:Եթե շփումը իրականացվում է փոխհարաբերության այս կամ այն ձևում,արտաքին միջոցների օգնությամբ,ապա հարաբերությունը ներքին հոգեկան կյանքի օբյեկտ է,գիտակցության բնութագրում,որը չի նախատեսում արտահայտչամիջոցների ամրապնդում:

Հասակակիցների հետ շփման զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում ընթանում է փուլերով:Առաջին փուլը 6-8 տարեկանն է,երբ հաղորդակցման հիմքում ընկած են հիմնականում գործնական հարաբերություններ:Հիմնական հաղորդակցական պահանջմունքը հասակակցի մասնակցությունն է,որը արտահայտվում է երեխայի գործողություններում:Երկրորդ փուլը 9-10

տարեկանն է,երբ ի հայտ է գալիս հասակակցի հետ իրադրային գործնական համագործակցության պահանջմունքը:Այդ պահանջմունքը կարևորվում է խաղաբաշխմամբ,խաղընկերոջ գործողություններից:

Ժամանակակից հոգեբանության մեջ երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորման ուղղությամբ կան տարբեր մոտեցումներ՝երեխաների ընտրողական վերաբերմունքը մյուս երեխաներին գնահատելու,ճանաչելու և երեխաների համատեղ գործունեության մեջ որպես շփման արդյունք ձևավորվող վերաբերմունք:Շփվելու,հաղորդակցվելու պահանջ ունի յուրաքանչյուր անհատ:Այդ պահանջը կայանում է նրանում,որ անձը ձգտում է ճանաչել այլ մարդկանց,նրանց միջոցով նաև ճանաչել ինքն իրեն:Մարդիկ ճանաչում են միմյանց գործունեության տարբեր բնագավառներից,քանի որ մարդը դրսևորում էիրեն բնորոշ յուրահատկությունները հենց գործունեության ժամանակ:Շփումը այդ հարաբերություններում ունի յուրահատուկ դեր,քանի որ այն ուղղված է դիմացի անձին այնպես,ինչպես սեփականին,և այդ երկկողմանի գործընթացը բերում է նրան որ անձը ճանաչելով աշխարհը,մարդկանց,ինքնաբերաբար,դառնում է ճանաչման օբյեկտ:Բազմաթիվ հեղինակներ(Տ.Խ.Մարկովա,Վ.Դ.Նեչաևա,Մ.Ի.Լիսինա,Ռ.Ի.Ժուկովսկայա) անդրադառնալով կրտսեր դպրոցական տարիքին,նշել են,որ հաղորդակցման դերը այս շրջանում անփոխարինելի է:Երեխայի հաղորդակցվելու առաջին փորձերը տեղի են ունենում մեծահասակների շրջապատումից են ,քանի որ մեծահասակ-երեխա հարաբերությունները մարդու գոյության և երեխայի զարգացման առաջնային պայմաններից են:Երեխայի վերաբերմունքը իրականության նկատմաբ միջնորդավորվում է մեծահասակների հետ նրա հարաբերությամբ,ինքնուրույնության նկատմամբ:Մեծահասակը երեխայի համար հանդես է գալիս որպես նոր գիտելիքների յուրացման արդյունք:Նրանք երեխային հասարակության հետ կապող օղակն է,նա է ուղղորդում երեխային,պատասխանում նրան հուզող հարցերին,դրանով իսկ մասնակցելով նրա անձնավորության կայացման գործընթացին:Մեծահասակը շփման մեջ մտնելով երեխայի հետ՝սեփական օրինակով արժևորում է տարբեր հասարակական երևույթները,տալիս է իր գնահատականը,կարևորում իրադարձություններին և փորձում է խոսքի միջոցով ուղղել երեխայի սխալները:Նշվածը հաստատում է,որ հաղորդակցումը մեծահասակի հետ նպաստում է երեխայի մոտ մեծահասակի նկատմամբ ակտիվ դրական հարաբերություն:Երեխա-մեծահասակ փոխհարաբերությունը հանդիսանում է երեխայի մոտ մեծահասակի ակտիվ ակտիվ դրական հարաբերության ձեռք բերմանը,դրդապատճառ է հանդիսանում անկախ վարքի միջոցների առաջացման համար:Երեխա-մեծահասակ հարաբերությունը հանդիսանում է երեխայի՝իրականության նկատմամբ վերաբերմունքի բոլոր ձևերի և հոգեկանի զարգացման առաջնային հիմքը:Մեծահասակի հետ հաղորդակցումը թույլ է տալիս երեխային անմիջական շփումների հստակեցմանը,բայց պետք է նշել,որ

կրտսեր դպրոցական տարիքի երեխաների փոխհարաբերությունները տարբերվում են մեծահասակների հետ հաղորդակցումից:

Համատեղ ուսումնական գործունեության ընթացքում երեխաների միջև նոր փոխհարաբերություններ են հաստատվում:Դպրոց ընդունվելուց մի քանի շաբաթ անց առաջին դասարանցիներից շատերի մոտ լքում են երկչոտությունն ու բազմաթիվ նոր տպավորությունների ազդեցության տակ առաջացած շփոթվածություն:Նրանք սկսում եմ ուշադրությամբ հետևել նույն նստարանին նստող երեխայի վարքին,շփվում են այն համադասարանցիների հետ,ովքեր համակրում են իրենց,կամ որոնց հետ հետաքրքրությունների ընդհանրություն են ունենում:Նոր կոլեկտիվում կողմնորոշվելու առաջին շրջանում երեխաների որոշ մասը դրսևորում է իրենց բնավորությանը ոչ հատուկ գծեր,բայց մյուս երեխաների հետ նորանոր փոխհարաբերությունների հաստատման հետ միասին,դպրոցում յուրաքանչյուրը սկսում է հանդես բերել իր իսկական անհատական առանձնահատկությունները:

Հետազոտության ընթացք

Ակնկալելով տեսնել փոխհարաբերությունների առավել լայն դաշտ, հետազոտական աշխատանքն իրականցրեցինք, Լիճքի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հետազոտության հաջող ընթացքն ապահովելու նպատակով աշխատանքը պլանավորվեց և իրականացվեց երկու փուլով:

Առաջին փուլում անցկացվեց դիտում և զրույց կրտսեր դպրոցականների շրջանում: Մեթոդների անցկացման ընթացքում գրանցվեց ցանկացած ինֆորմացիա, որը դրսևորվեց նրանց վարքում և փոխհարաբերություններում: Միաժամանակ դիտվեց նաև սոցիալական մանկավարժների իրականացրած սոցիալ-մանկավարժական գործունեությունը դպրոցում:

Դիտման արդյունքները խոսում են այն մասին, որ կրտսեր դպրոցականների մոտ առավել հստակ արտահայատված է ուսուցման պրոցեսին համակերպվելու ներքին մղումը: Ընդ որում, այդ մղումը, դրսևորվում է ոչ միայն դասերի ընթացքում այլև դպրոսից դուրս:Նկատենք սակայն,որ առաջին և երկրորդ դասարաններում նրանց դեռևս բավականություն են պատճառում սոսկ արտագրելու,հաշվելու, ընթերցելու կամ վարժություններ լուծելու պրոցեսները:Այնուհետև, նրանց մոտ աստիճանաբար հետաքրքրություն է առաջանում դեպի դասավանդվող առարկաները, բուն գիտելիքները: Արդեն 3-4-ր[1] դասարանների երեխաները ընդհանուր հետաքրքրություն են ցուցաբերում դեպի գիտության հիմունքները, դեպի ուսումնական առարկաները, ձգտելով շատ բան սովորել: Այսինքն կրտսեր դպրոցականները սկսում են գիտակցել,որ սովորելը, ուսումը իրենց առաջին պարտականությունն է: Կրտսեր դպրոցականի ըմբռնումն ու մտածողությունը կոնկրետ են, կերպարային–առարկայական, անմիջական Դիտման ընթացքում հետաքրքիր ևս մեկ երևույթ, որը գրավեց մեր ուշադրությունն, այն էր, որ կրտսեր դպրոցականները դասընկերների և մյուս հասակակիցների նկատմամբ ցուցաբերում են մեծամասամբ բարություն,պատրասակամություն դժվարությունների ժամանակ մեկը մյուսին օգնելու և աջակցելու կարողություն և հմտություն: Ընդ որում, վերոնշյալ հատկանիշներով կրտսեր դպրոցականը մեկ այլ հասակակցի համար կարող է շատ լավ ընկեր լինել, դրսևորելով լավագույն ընկերոջ հատկանիշները: Բայց այս ամենը ժամանակավոր բնույթ կարող է կրել,ինչ-որ մի պահից սկսած այդ կատարյալ փոխհարաբերությունները փոխվում են: Ստեղծվում է տպավորություն, համաձայն որի նա անընդհատ փնտրում է լավագույն ընկերոջ, ով կլսի, կհասկանա իրեն:

Կրտսեր դպրոցական տարիքում սոցիալականացման հետ կապված խնդիրներ անխուսափելի են, քանի որ տարիքի փոփոխությունները ուղղակի կամ անուղղակի ձևով ազդում են երեխայի առողջ սոցիալականացման վրա: Եվ այս տարիքում, նա որոշ չափով սոցիալական մանկավարժի աջակցման կարքն ունի: Պայմանավորված խնդրի բնույթով սոցիալական մանկավարժը, սոցիալ- մանկավարժական աջակացությունը տարբեր եղանակներով կարող է իրականացնել, օրինակ, խաղերի, խորհրդատվության, զրույցի և այլն: Եվ որպեսզի աջակցությունը լիարժեք արդյունք տա, այս աշխատանքի մեջ անհրաժեշտ է նաև ծնողի ներգրավածությունը: Այս տարիքում հատկապես անհրաժեշտ է սոցիալական մանկավարժի սոցիալ-մանկավարժական աշխատանքն ուղղված կրտսեր դպրոցականին և ծնողներին: Պարզելու համար թե տվյալ դպրոցում, որքանով են համագործակցում սոցիալական մանկավարժներն ու ծնողները երեխաներին աջակցելու նպատակով, կազմեցինք և անցկացրեցինք հարցաթերթեր: Վերջիններս անկացվեց ծնողների և կրտսեր դպրոցականի շրջանում:

Արդյունքում պարզ դարձավ, որ տվյալ կրթական հաստատությունում սոցիալական մանկավարժը իր մասնագիտական գործառույթները

ամբողջությամբ է իրականացնում: Այսինքն սոցիալական մանկավարժը, կրտսեր դպրոցականին իր տարիքային խնդիրները հաղթահարելու համար, որևէ սոցիալ-մանակավարժական աջակցություն է իրականացնում:: Նկատվեց նաև ծնող- մանկավարժ համագործակցության բացակայությունը: Այն ինչ, վերջիններիս հարաբերությունները, ցանկալի է որ ունենան գործընկերային բնույթ, հագեցած փոխադարձ համագործակցությամբ:

Մեծ թվով ծնողներ տվյալ տարիքային խմբի առանձանահտկություններից ինֆորմացված չլիլնելու պատճառով, սխալ ուղղությամբ են տանում կրտսեր դպրոցականի դաստիարակությունն՝ անտեսելով տարիքային առանձնահատկությունները: Այն ինչ, վերջիններիս որպես հիմք լինելը, ոչ միայն ցանկալի է, այլ ՝ անհրաժեշտ: Որպեսզի ծնողը տվյալ տարիքի վերաբերյալ գիտական ինֆորմացիայի տիրապետի և կարողանա այն գրագետ օգտագործել երեխայի դաստիարակության ընթացքում, անհարժեշտ է մանկավարժի կողմից սոցիալ-մանկավարժական աջակցության տրամադրում ծնողին:

Ծնողների լուսավորմանն ուղղված որևիցէ աշխատանք, հոգեբանը չի իրականացնում տվյալ կրթական հաստատությունում, միակ աշխատանքը դասվարի ներկայությամբ ծնողական ժողովների անցկացումն է: Ծնողների միայն 8 %-ն է համագործակցում հոգեբանի հետ:

Հետազոտական աշխատանքի երկրորդ փուլը կազմակերպվեց առաջին փուլի արդյունքների հիման վրա: Հետազոտական աշխատանքի երկրորդ փուլում ուսումնասիրվեց այն հիմնական պատճառները, որոնք դժվարացնում են կրտսեր դպրոցականների՝ միյանց հետ ունեցած փոխհարաբերությունները:

Մեթոդների անցկացումից զատ, կազմակերպվեց նաև խորհրդատվություն, կրտսեր դպրոցականները իրենց տարիքային առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով: Անցկացվեց երկու դաս առաջին դասարանում՝ ,,Խմբային հետազոտություն ,, և ,,Զրույց,, մեթոդները:

Հետազոտության հիմնական նպատակն էր վեր հանել բոլոր այն պատճառները, որոնց ներկայությամբ պայմանավորված դժվարանում են նրանց փոխհարաբերությունները միմյանց հետ:

Մարդկային կյանքն առանց փոխհարաբերությունների պատկերացնել անհնար է: Դրա արդյունքնում ենք շփվում, սոցիալականացվում, ինֆորմացվում, կուտակում գիտելիք, այսինքն մեզ համար ամենակարևոր գործընթացները իրականանում են փոխհարաբերության արդյունքում:

Փոխհարաբերությունները շրջապատող աշխարհի հետ բոլոր տարիքներում էլ արժևորվում և կարևորվում է : Այս տարիքում շփումը հասակակցի հետ դառնում է կարևոր և առաջնային գործունեություն: Մի շարք գործոնների անմիջական ազդեցության ներքո փոխահարաբերությունները կտրուկ փոխում են իրենց բնույթը, երբևիցէ ուրախ և ջերմ հարաբերությունները փոփոխվում են : Եվ հարց է առաջանում, թե այդ որ գործոնների պատճառով է դժվարություններ ծնվում փոխհարաբերություններում:

Այս տարիքում կրտսեր դպրոցականի համար առաջնային նշանակություն է ձեռք բերում հասակակիցների հետ շփումը: Որն էլ իր հերթին տարբեր պատճառների անմիջական ներգործության արդյունքում, փոփոխում է իր բնույթը: Երեխան փորձում է հնարավորինս շատ ժամանակ անցկացնել ընկերների հետ: Որն էլ դառնում է ծնողների անհանգստության պատճառը: Արդյունքում կարող է ծնողների և հասակակիցների հետ ունեցած փոխհարաբերություններում խնդիրներ հետ բախվել: Փոխհարաբերությունների դժվարացման պատճառները տարբեր են:

Պատճառները վերհանելու նպատակով, աշակերտներին հանձնվեցին հարցաթերթիկներ, միաժամանակ անցկացվեց նաև զրույց, որի հիմնական նպատակն էր հասկանալ թե երեխան, որքանով է կարևորում ուսուցչի դերը իր կյանքում: Այս կերպ ինֆորմացիան առավել օբյեկտիվ է լինում:

Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում դրսևորվում է ճգնաժամայնություն՝այսինքն այս տարիքին է բնորոշ խաղի մեծ դերային նշանակությունը:Հատկապես առաջին դասարանցուն ուսումնական գործունեության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է դասապրոցեսը իրականացնել խաղի միջոցով,որպեսզի նա ավելի սիրով հաճախի դպրոց և մասնակցի դասին:

Եվ վերջապես եկանք այն եզրակացությանը,որ առաջին դասարանցին գտնվում է կարծես անցումային փուլում .նախադպրոցական տարիքից,որտեղ բոլոր նոր անձնային ,հոգեբանական որակները առավել հեշտ և լավ ձևավորվում են խաղային գործունեության մեջ,դեպի կրտսեր դպրոցական տարիքը,որտեղ առաջատար գործունեությունը դառնում է ուսուցումը:Ընդ որում այն երեխայի կյանքում ամենամեծ տեղն է գրավում և որին երեխան օրվա մեծ ժամանակն է տրամադրում,ոյլ որովհետև խաղի զարգացման հետ կապված՝տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները երեխայի հոգեկանում,զարգանում գոգեկան այն գործընթացները,որոնք անհրաժեշտ են զարգացման նոր,առավել բարձր աստիճանի անցնելու համար:Խաղում է ծնվում զարգացման հաջորդ փուլի առաջատար գործունեության `ուսումնական գործունեության տարրերը:

Տվյալների մշակում և վերլուծություն

Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքին մասնակցել են թվով25ծնող և 25կրտսեր դպրոցական:

Կատարված հարցաթերթիկների արդյունքները վկայում են այն մասին, որ ծնողների 68% տեղյակ են թե որտեղ է եկել երեխան,և որն է նպատակը: Նույն պատասխանը հաստատում են նաև երեխաների 73%-ը, պնդելով որ ծնողները ճանաչում և ընդունում են իրենց ընկերենրին: Բայց տվյալ արդյունքները համեմատելով դիտման և զրույցի արդյունքների հետ, հանդիպում ենք հակասության: Համաձայն արդյունքների յուրաքանչյուր 5 կրտսեր դպրոցականից 3-ը գաղտնի շփվում է այնպիսի հասակակցի հետ, ում հետ ունեցած ընկերության մասին ծնողները տեղյակ չեն:

Միևնույն խմբի միայն 8 %-ն է հաստատում, որ վերոնշյալ պատճառը կարող է հանգեցնել ծնողների հետ ունեցած փոխհարաբերություններում դժվարությունների:

Նման հակասական պատասխանները կարելի է մեկնաբանել ի նկատի ունենալով տարիքային առանձնահատկությունները: Այս տարիքում հասակակիցների հետ ունեցած փոխհարաբերությունները դառնում են նորագոյացություն, թերևս դրանով պայմանավորված երեխայի ուշադրության կենտրոնում հայտնվում է հասակակցի հետ ունեցած փոխհարաբերությունները: հասակակիցների հետ ունեցած զրույցները վկայում

են այն մասին, որ երեխան գիտակցում է՝ ցանկացած պարագայում ծնողը կաջակցի ու կստեղծի փոխադարձ վստահության և հասկացման մթնոլորտ: Այն ինչ հասակակցի հետ ունեցած փոխհարաբերություններում նման մթնոլորտի ստեղծման պատասխանատվությունը կրում են իրենք կրտսեր դպրոցականները: Հետաքրքիրն այն է, որ իրականում երեխան փորձում է անել հնարավորը, միայն թե ձեռք բերի իր համար հեղինակություն հանդիսացող մեծահասակների՝ծնողների և ուսուցչի վստահությունը:

Այնուամենայնիվ վստահությունը ընկած է ամուր փոխհարաբեորությունների հիմքում:

Լիդերության առկայությունը, փոխհարաբերություններում որպես դժվարացման պատճառ



Փոխհարաբերություններում լիդերության առկայությունը կարող է ունենալ ինչպես դրական ազդեցություն, այնպես էլ բացասական: Խմբի արդյունավետ աշխատանքի ետևում կանգնած է խելամիտ լիդերը, ով կարողանում է ցանկացած պարագայում իր խմբին տանել «հաղթանակի»: Այն ինչ մեկ այլ պարագայում կարող է առաջ գալ կեղծ լիդերը, ով տվյալ խմբի համար որևէ դրական աշխատանք չի իրականացնում: Անգամ ընկերական փոխհարաբերություններում հնարավոր չէ խուսափել լիդերի առկայությունից, ով իր հեղինակությամբ կարող է ազդել տվյալ խմբի փոխհարաբերությունների բնույթի վրա: Կրտսեր դպրոցականների 82%-ի հաստատմամբ դասարանում լիդերների առկայությունը փոխհարաբերություններում դժվարությունների չի հանգեցնում: Այն ինչ, դիտման արդյունքները հակառակն են վկայում: Օրինակ, 15 հոգուց բաղկացած դասարանում, ձևավորված էին 3-ից ավելի փոքր խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր լիդերին: Լիդերները միմյանից տարբերվում էին իրենց առանձնահատկություններով / որպես առաջնորդ,որպես հեղինակություն հակառակ սեռի ներկայացուցիչների շրջանակում և այլն/: Բայց լիդերներն իրենք էին որոշում, թե ով կդառնա իրենց խմբի անդամ: Միևնույն ժամանակ նկատվում էր տարբեր խմբերի միջև առկա անառողջ մրցակցությունը:

Թերևս լիդերություն այն երևույթներից է, որն իսկապես առավել ցայտուն է երևում այս տարիքում, որքան էլ որ իրենք պնդեն հակառակը: Քանի որ այս տարիքում երեխային ուղղորդում է ինքնահաստատման ներքին մղումը: Կրտսեր դպրոցականների մեծամասնությունը փորձում է առաջինը լինել իր միջավայրում, ում խոսքն ընդունված կլինի բոլորի կողմից: Իսկ նման վերաբերմունքը կարող է դժվարությունների լուրջ պատճառ հանդիսանալ:

Անտարբերության առկայությունը ,փոխհարաբերություններում որպես դժվարեցման պատճառ



Յուրաքանչյուր մարդ, անկախ թե տարիքային որ խմբին է պատկանում, միևնույն է փնտրում է այնպիսի մեկին, ով կհասկանա իրեն ու իր ապրումները: կրտսեր դպրոցականը, տարիքային այս փուլում, հայտնվելով էմոցիոնալ նոր դաշտում, առավել շատ հասկացված լինելու պահանջմունք ունի: Դրանով պայմանավորված վերջինս փնտրում է այնպիսի մեկին, ով անտարբեր չի լինի իր ապրումների նկատմամբ:

Համաձայն հետազոտության արդյունքների կրտսեր դպրոցականների 90-%-ի հավաստմամբ հասակակիցների հետ ունեցած փոխհարաբերություններում առկա դժվարությունները պայմանավորված են անտարբերության առկայությամբ: Միևնույն դասարանում սովորող կրտսեր դպրոցականների ճնշող մեծամասնությունը հասակակիցների հետ ունեցած իր փոխհարաբերությունները գնահատում է դրական: Նշելով որ համադասարանցիների հետ որևիցէ խնդիրներ չունի և որ փոխհարաբերությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքը: Վերջինիս բացակայության դեպքում միայն կարելի է մտածել փոխհարաբերությունների դժվարացման մասին, անգամ ՝ խզման:

Համախմբվածության բացակայությունը որպես երեխա-հասակակից փոխհարաբերությունների դժվարացման պատճառ



Միևնույն դասարանում սովորում են սոցիալական տարբեր խավերի և տարբեր արժեհամակարգեր կրող երեխաներ: Նման պարագայում մանկավարժի բարձր մասնագիտական վարպետությունից է կախված, թե ինչպիսի փոխհարաբերություններ կձևավորվեն հասակակիցների միջև: Հարցման արդյունքների վկայմամբ փոխհարաբերությունների որակը կախված է հասակակիցների համախմբվածությունով: Այսպես երեխաների 30-%-ի կարծիքով հասակակիցների միջավայրում համախմբվածության բացակայությունը կարող է փոխհարաբերությունների վրա ունենալ որոշակի ազդեցություն, 30-%-ի կարծիքով՝ոչ, իսկ 40-%-ի հավաստմամբ այն գերակայող պատճառ չլինելով, կարող է մասամաբ ազդեցություն ունենալ:

Եզրակացություն

Այսպիսով հիմնախնդրի շուրջ կատարելով տեսական ուսումնասիրություններ և փորձարարական հետազոտություն՝հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1.Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերություններում հաղորդակցման բնորոշ առանձնահատկություններից է երեխաների ընտրողական վերաբերմունքը ընկեր ընտրելու և նրան գնահատելու, միմյանց օգնելու պատրաստակամությունը,փոխզիջումը, հասակակիցների հետ համագործակցության պահանջմունքը,հետաքրքրությունների ընդհանրությունը(միևնույն նստարանին նստելը,նույն շենքում ապրելը,արկածային գրականությամբ հետաքրքրվելը):

2. Միջանձնային հարաբերություններում կրտսեր դպրոցականների հաղորդակցման դժվարությունների հիմնական պատճառներն են՝ մրցակցությունը, անտարբերության առկայությունը,հիասթափությունը և փոխադարձ հասկացման,վստահության,համախմբվածության բացակայությունը:

3. Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերություններում դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ առաջարկում ենք

- Կրտսեր դպրոցականների կոլեկտիվում ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ:
- Օգնել հաղթահարելու ներքին անհանգստությունը,
- Սովորեցնել միմյանց օգնել և վստահել
- Ձևավորել և զարգացնել ինքնակարգավորման հմտություններ և հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու կարողություններ:
- Ձևավորել հաղորդակցման էթիկայի հմտություններ և կարողություններ :
- Ձևավորել և զարգացնել այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են՝ընկերասիրություն, բարություն, հանդուրժողականություն, ապրումակցում և այլն:
- Երեխաների ծնողների շրջանում մանկավարժահոգեբանական լուսավորության իրականացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա "Մանկավարժական հոգեբանության հարցեր" - Երևան: Լույս, 1983.

2. Էլկոնին Դ.Բ "Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն" - Երևան: Լույս, 1975

3. Էլոյան Տ.Ս "Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները" - Երևան: Լույս, 1980

4. Խուդոյան Ս. "Անձի զարգացման ճգնաժամային տարիքները"-Երևան: Զանգակ-97, 2004.

5. Կրուտեցկի Վ.Ա. "Մանկավարժական հոգեբանության հիմունքները"- Երևան: Լույս, 1976.

6. Մանկավարժական հոգեբանության հարցեր /Խմբ.՝ Մ.Ա. Մազմանյան; Խմբ.՝ Հ.Մ. Թուրունջյան ; Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկավարժ. ին-տ. - Երևան : Միտք, 1965

7. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ Խմբ.՝ Ա. Պետրովսկի - Երևան: Լույս, 1977

8. Абрамова Г. "Возрастная психология", М., Академический проект, 2000

9. Адлер А. "Воспитание детей", Ростов-на-Дону, Феникс, 1998

10. Божович Л. "Личность и ее формирование в детстве", М., МПСИ, 1994

11. Журавлев В.И. "Основы педагогической конфликтологии", М., 1995.

12. Кривцова С. "Учитель и проблемы дисциплины", М., 2002

13. Кулагина И.Ю. "Возрастная психология (Развитие ребенка от рождения до 17 лет)": Учебное пособие. - М.: Изд-во РОУ, 2006.

14. Лобанов А.А. “Основы профессионально-педагогического общения”: Учебное пособие для студентов высш.пед.учеб.заведений. - М.:Изд.центр «Академия», 2002.

15. Овчарова Р.В. “Технологи практического психолога образования”: Учебное пособие для студентов вузов и практических работников. -- М.: ТЦ «Сфера», 2000.

16. “Психическое развитие младших кольников”, под ред. Давыдова В., М., Педагогика, 1990

17. “Практическая психология образования” под ред. Дубровиной И., М., ТЦ «Сфера», 1997

Դասի պլան

Դասարան՝ Ⅰ^{գ}

Առարկա՝ Մայրենի

Դասի թեմա՝ «Ա» հնչյուն-տառի ուսուցում

Չափորոշիչ

- Կիմանան տառանունը, կկարողանան տարբերել տառը և հնչյունը
- Կկարողանան վանկատել բառերը, կտարբերեն միավանկ և բազմավանկ բառերը
- Կկարողանան լսել, հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը
- Կկարողանան իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել

Դասի նպատակը

- Ուսուցանել «Ա» հնչյուն-տառը
- Հյուսել պատմություն թեմատիկ նկարի շուրջ
- Ամրապնդել պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն- տառ շղթան
- Հարստացնել բառապաշարը նկարելուկների միջոցով
- Ամրապնդել բառի հնչյունային վերլուծությունը:

Դասի խնդիրները

- Սովորել նոր բառերի բացատրությունը
- Կազմել կայուն կապակցություններ
- Ամրապնդել պատմություն-տառ շղթան

Դասից հետո աշակերտները կիմանան

- Կարդալ ու գրել «Ա» հնչյուն-տառը
- Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը

·Գործնականում կիրառել բառակապակցության գիտելիքները

·Նկարագրել, բնութագրել կերպարները

Կահավորանքը՝ տառապատկերներ, պաստառներ, քարտեր, պրոյեկտոր, էկրան, մրգեր և բանջարեղեն՝ զամբյուղներով, աշնան տերևներ, մեծ մատիտներ, դիմակներ, Ա-ի մեծադիր տառապատկեր, աշակերտների ձեռք պատկերող թղթեր

Մեթոդները՝ մտագրոհ, հարց և պատասխան, կռահի՛ր, խաղային, դերային

Դասի ընթացքը՝

Խթանում

1.Ողջույնի խոսքեր

2. Հարցեր և պատասխաններ

3.Ամփոփելով, ասել,որ այսօր հոկտեմբերի 12-ն է, աշնանային գեղեցիկ օր:

4. Կրկնել անցածը՝ պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն շղթան:

5. Ֆիզկուլտդադար

6. Բեմականացում՝ «Ապերախտ աղվեսը»: Գտնել օրինաչափությունը:

Իմաստի ընկալում

7. Ցուցադրել Ա տառը և ասել, որ այսօր սովորելու են Ա հնչյուն – տառը, որ տառերը լինում են մեծատառ և փոքրատառ:

8. Տեղեկություն Մեսրոպ Մաշտոցի մասին:

9. Երդում

10. Ցուցադրել նկար-պատմությունը: Աշակերտները պատմում են նկարը:

11. Գտնել գրքի և պաստառի նկարների տարբերությունը:

10. Դասագրքի նկարելուկները ցուցադրել սահիկներով: «Աշնան նկարը» ոտանավորը ներկայացնել մեծ մատիտներով:

11. Տառի գրությունը: Աշակերտների ձեռք-թղթերը՝ տառերով, փակցնել մեծադիր տառապատկերին:

Կշռադատում

12.Ամփոփել, «Ա տառի երգը»

13. Վկայականի հանձնում

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան՝ Մայրենի

Դասարան՝ Առաջին

Դասի թեման՝ Ձ հնչյուն - տառի ուսուցում

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասի նպատակները՝

• ուսուցանել «Ձ» հնչյուն - տառը,

• պատմություն հյուսել թեմատիկ նկարի շուրջ,

• զարգացնել կարդալու սկզբնական կարողությունները,

• բանավոր խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում,

• սովորել նոր բառերի բացատրությունը (ձիգ, ձող),

• կազմել բառակապակցություններ (ճերմակ ձյուն, ձյան փաթիլներ, մեծ ձնեմարդ, ձկնորս պապիկ, անուշաբույր ձնծաղիկներ),

• ամրակայել պատմություն - տառ շղթան,

• կազմել բառեր, որտեղ «Ձ» հնչյունը բառասկզբում է, բառամիջում , բառավերջում ,

• գրել «Ձ» տառը

• տեղեկություններ հաղորդել տարվա եղանակներից ձմռան և գարնան մասին:

Կահավորանքը՝ մեծադիր պաստառ՝ ձմեռ պատկերող, մեծադիր տառապատկերներ, համակարգիչ, պրոյեկտոր, մեծ էկրան, զամբյուղով ձնծաղիկներ

Դասին օգտագործված մեթոդները՝ մտագրոհ, կանխագուշակման, բանալի բառեր

Դասի ընթացքը՝

1.Խթանման փուլ

Ուսուցիչ - Սիրելի՛ աշակերտներ, այսօր մենք հյուր ունենք: Իսկ թե ո՞վ է նա, կիմանաք՝ գուշակելով նրա առաջարկած հանելուկի պատասխանը: Եկե՛ք ներս հրավիրենք նրան:

Գալիս է գարնան հագուստով աշակերտներից մեկը՝ ձեռքին զամբյուղով ձնծաղիկներ: Բարևում է աշակերտներին և ասում հանելուկը.

Դաշտերն են նորից կանաչում,

Ծառերն են նորից ծաղկում,

Օրերն են երկարում,

Թռչունները վերադառնում:

Այդ ե՞րբ է լինում:

Գարուն - Ապրե՛ք, երեխաներ, դուք ճիշտ գուշակեցիք: Ես ձեզ մոտ դատարկ չեմ եկել: Ձեզ բերել եմ իմ առաջին ծաղիկները՝ ձնծաղիկները:

Աշակերտներին բաժանում է ձնծաղիկները:

Ուսուցիչ - Ե՞րբ են իրենց գլխիկները դուրս հանում անուշաբույր ձնծաղիկները:

- իսկ ե՞րբ է գալիս ձյունը:

- Ձնծաղիկ, ձյուն, ձմեռ բանալի բառերը մեզ կօգնեն գուշակելու, թե ինչ ենք այսօր սովորելու:

Ցույց տալ մեծադիր տառապատկերները, սովորեցնել երկտող բանաստեղծությունը:

Դադար - Մեծ էկրանին դիտել Ձ-ի տեսահոլովակը: Աշակերտները կատարում են համապատասխան շարժումներ:

2. Իմաստի ընկալում՝

Ուսուցիչ - Հիմա ուշադիր նայեք պաստառի թեմատիկ նկարին և պատմեք, թե ինչ եք տեսնում:

Աշակերտները պատմում են, որ ձմեռ է, ամենուրեք ձյուն է նստել, ձյան փաթիլները թափվում են վերևից, երեխաները խաղում են դրսում: Աշակերտները հանկարծ նկատում են, որ նկար - պատմությունը թերի է:

Ուսուցիչ - Մեզ օգնության է եկել «կախարդական» պարկը: Եկեք պարկից հանենք պատմությունն ամբողջացնող նկարները և փակցնենք պաստառի վրա:

Աշակերտները հերթով պարկից հանում են նկարները, կազմում նախադասություններ և փակցնում համապատասխան տեղում:

Ուսուցիչ - Եկե՛ք առանձնացնեք այն բառերը, որոնք փակցրինք պաստառի վրա և կազմենք բառակապակցություններ:

Աշակերտները թվարկում են բառերը՝ ձնեմարդ, ձնագնդի, ձկնորս, ձուկ և կազմում բառակապակցություններ:

Առաջարկել կազմել բառեր, որտեղ Ձ-ն գտնվում է բառասկզբում, բառամիջում և բառավերջում:

Կարդալ տալ դասագրքի բառաշարքերը և բացատրել «ձիգ» , «ձող» բառերի իմաստը:

Դադար - Խաղ՝ «Գտնել «ավելորդը»»

Խաղ - մրցույթ՝ «Աջ ու ձախ»

Ուսուցիչ - Նկարում ձմեռը «լացում է»: Ինչո՞ւ:

Լսել պատասխաններ:

Գուշակել հանելուկի պատասխանը:

Կարդալ և սովորեցնել անգիր «Ձնծաղիկ» բանաստեղծությունը:

Ցույց տալ Ձձ տառերի գրելաձևը:

3.Կշռադատման փուլ՝

Բաժանել գունավոր թղթեր:

Երաժշտության տակ թղթի ծալումով պատրաստել ձկներ: Ձկների վրա գրել Ձ ձ տառերը:

Կատարել անդրադարձ: